

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Մարտի 26-ին, կիրակի.—Զատիկ. Յիշատակ Յարութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր քրիստոնեական եկեղեցու մեծագույն տոնն է, ս. Հարության տոնը, որ սիաժամանակ գարնան տոն է համարվում ըստ մեր ազգային հին ավանդությունների, այսինքն բնության վերազարթոնքի խորհրդավոր տոնը ձմեռային մեռելությունից հետո:

Երբ գարնանային է, ջերմ ու արևոտ՝ հագեցված գարնան անուշ բույրով:

Մայր տաճարը, մայրավանքի շրջափակը լեցուն է բաղաքամայրից, հեռավոր շրջաններից եկած հավատավորների հոծ բազմությամբ:

Ժամը 11-ին ճնչում են Մայր տաճարի զանգերը՝ ավետելով Փրկչի հրաշափառ Հարության ուրախությունը:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանում զգեստավորված, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական հանդիսավոր ս. պատարագ:

Ս. Սեղանին ապասարկում են Մայր Աթոռի վարդապետներ և սարկավագներ:

Մայր տաճարի երկու առյաններում ներկա են Գերագույն հոգևոր խորհրդի, Վերաստուգիչ հանձնաժողովի, Իրավագիտական մարմնի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները, ինչպես նաև Զատկվա տոնի առթիվ հատկապես Թեհրանից ժամանած 45 հոգուց բաղկացած ուխտավորական խումբը, որը եկել էր իր ուխտը կատարելու ս. Էջմիածնի խորաններին առջև և համբուրելու հայրենի հողը:

Ս. պատարագին ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

«Հայր մեր»-ից առաջ բարոզում է Վեհափառ Հայրապետը՝ տալով Քրիստոսի Հարության ոգևորիչ ավետիսը բովանդակ հայության, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Հայոց Հայրապետի զատկական բարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն

համարում (էջ 3): Նույն օրը, երեկոյան, Երևանի ռադիոկայանից հաղորդվում է Հայոց Հայրապետի զատկական վերոհիշյալ քարոզը:

Իր քարոզի ավարտին Վեհափառ Հայրապետը հայրական ջերմ սիրով և մեծ ուրախությամբ ողջունում է թեհրանահայ ուխտավորների ներկայությունը, օրհնում և բարի գալուստ մաղթում նրանց:

Ս. պատարագի ավարտին թեհրանահայ ուխտավորական ամբողջ կազմը բարեպաշտ երկյուղածությամբ հաղորդություն է ընդունում Ամենայն Հայոց Հայրապետի ձեռից:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարանի փոքր դահլիճ, ուր ընդունում է բազում շնորհավորություններ:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է զատկական ավանդական ճաշկերույթ, որին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի և Իրավագիտական մարմնի անդամները, Մայր Աթոռի պատասխանատու աշխատողներ, թեհրանահայ ուխտավորների ներկայացուցիչներ:

Զատկական ճաշկերույթին ներկա է լինում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում շնորհավորանքների և բարեմաղթության խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, տ. Կոմիտաս սրբազանը և Անդրանիկ Հասրաթյանը:

Զափազանց հուզիչ և անկեղծ էին, հանուն թեհրանահայ ուխտավորական խմբի, տիկին Նելլի Եղիազարյանի որդիական երախտագիտության և սրտագին շնորհակալական խոսքը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, իրենց հանդեպ ցույց տված ուշադրության և հոգատարության, ինչպես նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնից, Վեհափառ Հայրապետից, Ավագ շաբաթվա մի քանի օրերի ընթացքում եկեղեցական արարողություններից և հայրենի աշխարհից նրանց ստացած անմոռանալի տպավորությունների համար:

Զատկական ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և օրհնությամբ: